

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետությունում 2014թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստման և անցկացման համապետական հանձնաժողովի 2013 թվականի մայիսի 7-ի առաջին նիստի

Մասնակցում էին՝ հանձնաժողովի 40 անդամներից՝ 35-ը:

Բացակայում էին՝ ՀՀ ԱԺ գյուղատնտեսության և բնապահպանության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահը (հանձնաժողովի նախագահի տեղակալ), ՀՀ ԱԺ պատգամավորը (հանձնաժողովի անդամ), ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալը (հանձնաժողովի անդամ), ՀՀՀՀ գյուղատնտեսության նախարարության գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենը, «Գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն» ՊՈԱԿ - ի գործադիր տնօրենը:

Օրակարգում ներառված էին հետևյալ հարցերը.

1. Հայաստանի Հանրապետությունում 2014 թվականի գյուղատնտեսական համատարած հաշվառման անհրաժեշտությունը, էությունը, վիճակագրական բնույթը և կազմակերպչական հարցերը:

2. Հայաստանի Հանրապետությունում 2014 թվականին անցկացվելիք գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստման, անցկացման և նյութերի մշակման ծախսերի նախահաշվին հավանություն տալու մասին հարցը:

Բացման խոսքով հանդես եկավ նիստը նախագահող՝ ՀՀ 2014թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստման և անցկացման համապետական հանձնաժողովի նախագահ, ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար՝ **պրն.Ա.Գևորգյանը**: Նա ողջունեց հանձնաժողովի անդամներին անդրանիկ նիստի կապակցությամբ և առաջարկեց աշխատանքային քննարկումները կազմակերպել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության (ՀՀ ԱՎԾ) կողմից նախապես ներկայացված օրակարգի հաջորդականությունով:

Առաջին հարցը ներկայացնելու համար նա խոսքը փոխանցեց հանձնաժողովի նախագահի տեղակալ, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության նախագահ՝ պրն. Ս.Մնացականյանին:

Ս.Մնացականյան - Նա շնորհակալություն հայտնեց հանձնաժողովի նախագահին և անդամներին մասնակցության և հարցը կարևորելու համար: Ներկայացրեց Հայաստանի Հանրապետությունում 2014 թվականի գյուղատնտեսական համատարած հաշվառման անհրաժեշտությունը, էությունը, վիճակագրական բնույթը և կազմակերպչական հարցեր: Նշվեց, որ Միավորված Ազգերի Կազմակերպության (ՄԱԿ) ուղեցույցների համաձայն անդամ երկրները պարտավոր են առնվազն տաս տարին մեկ անգամ անցկացնել գյուղատնտեսական համատարած հաշվառում (ԳՀՀ), մինչդեռ Հայաստանի Հանրապետությունում ԳՀՀ երբևիցե չի իրականացվել:

Համաձայն գործող միջազգային մեթոդաբանության գյուղատնտեսական համատարած հաշվառումն իրենից ներկայացնում է գյուղատնտեսության կառուցվածքի վերաբերյալ համընդգրկուն տվյալների՝ գյուղատնտեսական նշանակության հողերի, անասնազվխաքանակի, գյուղատնտեսական տեխնիկայի և գյուղատնտեսական նշանակության շինությունների, առկա ներուժի (մարդկային, նյութական) և դրանց օգտագործման վերաբերյալ հաշվառման պահն արտացոլող հավաքագրման, մշակման և տարածման վիճակագրական գործառույթ:

Հայաստանի Հանրապետությունում ԳՀՀ իրականացման կարևորությունը պայմանավորված է նաև նրանով, որ գյուղատնտեսությունը հանդիսանում է տնտեսության կարևորագույն ոլորտներից մեկը, որում ստեղծված նոր արժեքի մասնաբաժինը վերջին տարիների համախառն ներքին արդյունքի ծավալում կազմում է 16-20%, իսկ զբաղվածների թվաքանակը՝ ընդհանուր զբաղվածների շուրջ 45 % (մոտ 492 հազ. մարդ): Ոլորտում առկա են բազմաթիվ ու բազմաբնույթ տնտեսավարող

սուբյեկտներ, որոնցից միայն գյուղացիական տնտեսությունների (գյուղաբնակ տնային տնտեսությունների) քանակը կազմում է մոտ 340 հազար (նրանց բաժին է ընկնում գյուղատնտեսության համախառն արտադրանքի մոտ 90%-ը) և որոնց բնութագրական է.

- փոքր չափերը
- ներտնտեսային հաշվառման բացակայությունը
- ապրանքայնության ցածր մակարդակը (արտադրանքի 45%-ը սեփական սպառմանն է միտված, 20%-ը՝ բնամթերային վճարումներին և փոխանակումներին և, միջինը միայն 35%-ն է դրամայնացվում)
- մասնագիտացման ցածր աստիճանը
- ներդրումների և եկամուտների փոքր, սահմանափակ չափերը
- տնտեսական ակտիվության և գործունեության ներդրության փոփոխականության (այդ թվում՝ սեզոնային) բարձր աստիճանը և այլն:

Գյուղատնտեսական համատարած հաշվառման իրականացումը Հայաստանի Հանրապետությունում, հնարավորություն կընձեռի ձևավորել գյուղատնտեսության վերաբերյալ վիճակագրական տվյալների ամբողջական համակարգ, գյուղատնտեսությամբ զբաղվող սուբյեկտների վիճակագրական ռեգիստրներ, կատարելագործել ընտրանքային վիճակագրական գործիքները, ապահովել դրանց համադրելիությունը գործող միջազգային չափանիշներին ու չափորոշիչներին և բացահայտել տարիների ընթացքում գյուղատնտեսության ենթակառուցվածքների փոփոխությունների միտումները: Գյուղատնտեսական համատարած հաշվառումը հնարավորություն կընձեռի ձևավորելու ոչ միայն միջազգայնորեն համադրելի առավել դեզագրեզացված ցուցանիշներով բնութագրվող գյուղատնտեսության պատկեր Հայաստանում, այլև կհստակեցնի գյուղատնտեսության, որպես ձեռնարկատիրության (տնտեսական գործունեության տեսակի) առավել մանրամասնեցված կազմն ու կառուցվածքը, ինչի հենքով հնարավոր կլինի մշակել 340 հազար

գյուղատնտեսությամբ զբաղվող տնային տնտեսությունների համար հաշվառման հիմք հանդիսացող կազմակերպա-իրավական նոր և գործունակ ձևեր:

Ս.Մնացականյանը նշեց, որ հանրապետության տարածքն ըստ տեղեկությունների հավաքագրման պատասխանատու ատյանների սուբորդինացիայի բաժանվել է 5 հարթության, որոնց միջոցով կիրականացվեն ԳՀՀ տեղեկատվության հավաքագրումը և ամփոփումը՝ I) հաշվային, II) հրահանգչական, III) ԳՀՀ տեղամասային, IV) ՀՀ ԱՎԾ մարզային գործակալություններ ու քաղաք Երևան և V) ՀՀ ԱՎԾ ԳՀՀ վարչություն: Նա ընդգծեց, որ այս գործառույթում հիմնական դերակատարները պետք է լինեն հաշվարարները, որոնց հավաքագրման գործընթացում ակնկալվելու է համայնքների ղեկավարների աջակցությունն առ այն, որ նրանք որպես հաշվարարների թեկնածուներ ներկայացնեն համայնքի բնակիչներից, հատկապես կարևոր է, որ թեկնածուները լինեն մանկավարժներ, բժիշկներ և համայնքներում բնակչության կողմից հարգանք վայելող անձինք, այլ ոչ թե ֆիսկալ գործառույթներ իրականացնող մարմինների ներկայացուցիչներ:

Նիստը նախագահողի առաջարկությամբ զեկուցողին ուղղվեցին հարցեր.

Ա.Գևորգյան - Քանի որ ԳՀՀ ընթացքում հավաքագրվելու է անվանական տեղեկատվություն, ապա շատ կարևոր է, որ տեղեկատվություն տրամադրողները վստահ լինեն, իրենց կողմից տրամադրվող անհատական տեղեկատվության գաղտնիության սկզբունքի պահպանման վրա: ԳՀՀ ո՞ր փաստաթղթերում է այս սկզբունքն ամրագրված:

Ս.Մնացականյան - Սկզբնական վիճակագրական տեղեկությունների գաղտնիության պահպանման սկզբունքն ամրագրված է «Պետական

վիճակագրության մասին» և «Գյուղատնտեսական համատարած հաշվառման մասին» ՀՀ օրենքներում մասնավորապես՝ «Գյուղատնտեսական համատարած հաշվառման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածում: Այդ հոդվածում է ամրագրված նաև հետևյալ դրույթը.

«Գյուղատնտեսական հաշվառման սկզբնական (անհատական) նյութերը (այդ թվում՝ տվյալները) դատական, դատաքննչական և այլ մարմինները որպես ապացույց չեն կարող օգտագործել:»

Հարկ է նշել, որ վերը նշված օրենքների դրույթների հիմքում դրված է ՄԱԿ-ի պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքներից և «Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրքով» սահմանված սկզբունքներից՝ գաղտնիության պահպանման սկզբունքը, համաձայն որի ՀՀ ԱՎԾ-ն պարտավորված է չիրապարակել ու չտարածել վիճակագրական գաղտնիք համարվող սկզբնական՝ անվանական բնույթի վիճակագրական տեղեկությունները:

Ա.Գևորգյան - ԳՀՀ արդյունքում հավաքագրված վիճակագրական տվյալները համայնքի կտրվածքով կարո՞ղ են ամփոփվել և տրամադրվել համայնքների ղեկավարներին:

Ս.Մնացականյան - Նախատեսվում է, որ ԳՀՀ արդյունքում հավաքագրված վիճակագրական տվյալներն ամփոփվելու են համայնքային, մարզային և հանրապետական ագրեգացիայի մակարդակներով, ինչից ելնելով, համայնքային մակարդակով ամփոփ տվյալների տրամադրումը համայնքների ղեկավարներին, հնարավոր է:

Ս.Մանասարյան – Սա ոչ թե հարց է այլ առաջարկություն. քանի որ մեզ հայտնի է, որ ոչ բոլոր երկրներն են որ ֆինանսավորում են նման միջոցառումները, արդյոք ճիշտ չի լինի նախապես որոշել այն երկրների ցանկը որոնք պատրաստակամ են և/կամ կարող են ֆինանսական կամ այլ տիպի աջակցություն ցույց տալ Հայաստանի Հանրապետությանը ԳՀՀ

նախապատրաստման և անցկացման գործընթացում և առաջնահերթ դիմել այդ երկրներին: Երկրների ցանկը առաջարկում եմ կազմել ՀՀ ԱՎԾ-ի հետ համատեղ:

Ս.Մնացականյան – Առաջարկությունն ընդունելի է և ՀՀ ԱՎԾ – ն պատրաստական է իրականացնելու նման քննարկումներ: Միաժամանակ տեղեկացնում եմ Ձեզ առ այն, որ հանձնաժողովի անդամներին է տրամադրվել ՀՀ –ում 2014թ. անցկացվելիք ԳՀՀ հարցաշարը(ծրագիրը) և պարոն Ա. Գևորգյանի թույլտվությամբ խնդրում եմ Ձեզ մեկամսյա ժամկետում ծանոթանալ հարցաշարին և ներկայացնել առաջարկություններ:

Ա.Գևորգյանը օրակարգի երկրորդ հարցը ներկայացնելու համար խոսքը փոխանցեց համապետական հանձնաժողովի նախագահի տեղակալ, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության նախագահ՝ պարոն Ս.Մնացականյանին:

Ս.Մնացականյան - Նա ներկայացրեց 2013-2016թթ.-ի համար հաշվարկված ՀՀ 2014 թվականի ԳՀՀ նախապատրաստման, անցկացման և նյութերի մշակման ծախսերի նախահաշիվը: Այն նախապես տրամադրվել էր հանձնաժողովի անդամներին և Ս.Մնացականյանը պարզաբանեց, որ ներկայացված նախահաշիվը մշակված է չորս տարիների կտրվածքով և ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգմամբ սահմանված հիմնական հոդվածների: Նշվեց որ դրանք պայմանականորեն համարակալվել են, որպեսզի յուրաքանչյուր հոդվածին վերաբերվող համապատասխան պարզաբանումները հնարավոր լինի գտնել նախահաշիվին կից ներկայացված փաստաթղթում: 2013-2016թ.թ. գործառույթների երեք փուլերով՝ նախապատրաստական, անցկացման և տեղեկատվության ամփոփման և տարածման, սահմանված միջոցառումների արժեքը կազմում է շուրջ 1.84 մլրդ ՀՀ դրամ: Ծախսերի հիմնական մասը (մոտ 1.3 մլրդ. ՀՀ դրամ) նախատեսված է 2014թ. համար: Ընդհանուր ծախսերի առավել մեծ

մասնաբաժինը նախատեսված է ԳՀՀ աշխատանքներին ժամանակավոր ներգրավվելիք աշխատողների (հաշվարարներ, հրահանգիչ-հսկիչներ, ԳՀՀ տեղամասի վարիչներ և այլն) աշխատանքի վարձատրության համար՝ մոտ 1.36 մլրդ. ՀՀ դրամ (ընդհանուր ծախսերի շուրջ 74 %-ը):

Հարց՝

Ա.Գևորգյան - պարոն Մնացականյան, ըստ էության ներկայացվեց 2014թ. անցկացվելիք ԳՀՀ-ն ընդհանրացված և ոչինչ չսավեց փորձնական ԳՀՀ-ի մասին, որի անցկացումը շատ կարևոր է կազմակերպչական, մեթոդաբանական հարցերի և հնարավոր այլ խնդիրների լուծման առումով, ի՞նչ կասեք դրա վերաբերյալ:

Ս.Մնացականյան - Ինչպես ճիշտ նկատեցիք, փորձնական ԳՀՀ-ի անցկացումը շատ կարևոր է գործիքակազմի փորձարկման առումով, ելնելով դրանից նախատեսված է այն անցկացնել 2013թ. հոկտեմբեր ամսին:

Ա.Գևորգյան - Ո՞ր մարզերում և համայնքներում է անցկացվելու փորձնական ԳՀՀ-ն:

Ս.Մնացականյան - Համաձայն ՀՀ կառավարության 2013 թվականի ապրիլի 25-ի N 402 - Ն որոշման, փորձնական գյուղատնտեսական համատարած հաշվառումը կանցկացվի 2013 թվականի հոկտեմբերի 11-31-ը ներառյալ՝ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Շահումյան, Ազատավան և Նոր-Խարբերդ գյուղական համայնքներում, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի գյուղական համայնքում և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ քաղաքային համայնքում, Գանձաքար և Այգեհովիտ գյուղական համայնքներում:

Ս.Մանասարյան - Պարզաբանման նպատակով խնդրում եմ պատասխանել, 2013թ. փորձնական ԳՀՀ-ի կազմակերպման և անցկացման

նախահաշվով ներկայացված անհրաժեշտ գումարի պակասուրդը որքան է կազմում:

Ս.Մնացականյան – Ըստ կազմված նախահաշվի այն կազմում է շուրջ 69.7 մլն ՀՀ դրամ:

Պետք է խնդրեմ, որպեսզի որոշ պետական կառույցներ հնարավորինս սեղմ ժամկետում ՀՀ ԱՎԾ-ին տրամադրեն հետևյալ տեղեկատվությունը.

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեից.

- ըստ համայնքների հողային հաշվեկշիռները
- համայնքների ներսում հողերի սեփականության վկայական ունեցողների ցուցակները:

ՀՀ տարածքային կառավարման նախարարության <<Հայաստանի ազգային արխիվ>> ՊՈԱԿ-ից

- այգեգործական միության անդամների ցուցակն ըստ համայնքների:

ՀՀ մարզպետարաններից.

- օժանդակություն համայնքների միջոցով այգեգործական անդամներին տրամադրված և սեփականության իրավունքով պատկանող հողերի վերաբերյալ տեղեկատվություն, այդ թվում ո՞ր համայնքներում են դրանք տեղաբաշխված:

Համայնքներից մարզպետարանների աջակցությամբ.

- համայնքներում մշտապես, ժամանակավոր հաշվառված տնտեսությունների քանակը
- համայնքում չհաշվառված (չբնակվող) տնտեսությունների քանակի վերաբերյալ:

Ա.Գևորգյան - Քանի որ ՀՀ –ում ԳՀՀ-ն անցկացվելու է առաջին անգամ, կարևորվում է հանրային իրազեկման համապատասխան աշխատանքների

իրականացումը՝ բնակչության շրջանում գործընթացի վերաբերյալ ճիշտ պատկերացում ձևավորելու համար: Հանրությանը ԳՀՀ-ի լուսաբանման աշխատանքների ընթացքում, անհրաժեշտ է շեշտը դնել դրա կարևորության և սկզբնական տեղեկատվության գաղտնիության պահպանման վրա: Նշվեց, որ հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա սույն թվականի սեպտեմբեր ամսին:

Հանձնարարվեց.

1. ԳՀՀ համապետական հանձնաժողովի անդամներին մեկամսյա ժամկետում ներկայացնել առաջարկություններ ՀՀ –ում 2014թ. անցկացվելիք ԳՀՀ հարցաշարի (ծրագրի) վերաբերյալ:
2. Ըստ անհրաժեշտության, ՀՀ ԱՎԾ-ի համապատասխան հայտերի հիման վրա ցուցաբերել օժանդակություն, համապատասխան պետական մարմինների և կազմակերպությունների իրավասության ներքո առկա տեղեկությունների տրամադրման գործում:

Որոշվեց.

Հավանություն տալ ՀՀՀՀ 2014 թվականի գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստման, անցկացման և նյութերի մշակման ծախսերի նախահաշվին>>՝ որոշում N1 (կցվում է):

Հանձնաժողովի նախագահ՝

**ՀՀ փոխվարչապետ,
ՀՀ տարածքային կառավարման նախարար**

Ա. Գևորգյան

Հանձնաժողովի քարտուղար՝

**ՀՀ ազգային վիճակագրական ծառայության
աշխատակազմի գյուղատնտեսության
վիճակագրության բաժնի պետ**

Ա. Ավագյան